ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 18-ը մարտի 2019թ.
ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսազերծման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Բաբաջանյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսազերծման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ե. Վարդանյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 1-ին դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Ափթայմ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին «Ափթայմ» ՍՊԸ համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.
- «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացրել է նախկինում կատարված պայմանագիր, որը հանձնաժողովի կողմից գնահատելու համար պետք է ներկայացներ տվյալ պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: «ԱՓԹԱՅՄ» ՍՊԸ կողմից ներկայացված հավելված 5 /դիմում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման/ և հավելված 5.1 /տեղեկանք կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին/ «ԱՓԹԱՅՄ» ՍՊԸ կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չեն:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը գնահատող հանձնաժողովի որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «ԱՓԹԱՅՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /նիստը կասեցվել է/ շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:
«ԱՓԹԱՅՄ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և սահմանված ժամկետում չշտկեց արձանագրված անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոնշյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ որոշեց մերժել «ԱՓԹԱՅՄ» ՍՊԸ-ի հայտը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

1.3 18.03.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ մերժել «ԱՓԹԱՅՄ» ՍՊԸ-ի հայտը և «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին:

1.4 Հանձնաժողովը որոշեց «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս II (հրահանգ գնանշման հարցման հայտը պատրաստելու) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ «առաջինին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը»:

1.5 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 12:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Գ. Ուստյան
Գնահատող	Հ. Բաբաջանյան
Գնահատող	Ե. Վարդանյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան